# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27-ը նոյեմբերի, 2017թ., N41

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.11.2017Թ. ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ *համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Հայանիստ համայնքի ավագանու 27.11.2017թ. թիվ 12 նիստի օրակարգը՝
1.Հայանիստ գյուղական համայնքի տեղական տուրքերի և վճարների 2018թ. դրույքաչափերը սահմանելու մասին:
2.Հայանիստ գյուղական համայնքի Մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների 2018թ. դրույքաչափերը սահմանելու մասին:
3.Հայանիստ համայնքի ղեկավարի՝ 2018թ. վարձատրության չափը որոշելու և Հայանիստի համայնքապետարանի աշխատակազմի և Մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2018թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4.Հայանիստ համայնքի 2017թ. վարչական բյուջեի ծախսային փոփոխությունները հաստատելու մասին:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գաբրիելյան Արմեն
3. Գնորգյան Սարգիս
4. Կարապետյան Լևոն
5.Մկրտչյան Գեորգի
6. Բեգլարյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

27.11.2017թ.
գ. Հայանիստ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ**
**Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ա Վ Ա Գ Ա Ն Ի**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը նոյեմբերի, 2017թ., N42-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2018Թ. ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ *ավագանին որոշում է*

1.Սահմանել Հայանիստ համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել

ա. հիմնական օբյեկտների համար՝

-մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ:

բ.սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

- 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ.
- 3000 քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

գ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ.

2)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա.չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ.բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր

շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 2500 դրամ:

4)Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

ա. ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5.000 դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.500 դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22.500 դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50.000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5.000 դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.500 դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.500 դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22.500 դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50.000 դրամ:

5)Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 175 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

6)Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝ 100.000 դրամ:

7)Խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 30.000 դրամ:

8)համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա.հիմնակտն շինությունների ներսում՝
-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,
-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 5.000 դրամ,
-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համա 7.500 դրամ,
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10.000 դրամ,
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15.000 դրամ,
-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 25.000 դրամ,
բ.ոչ հիմնական շինությունների ներսում՝
-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ՝
-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000 դրամ,
-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝4000 դրամ,
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 7.500 դրամ,
-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 12.500 դրամ:
9)Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24$^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա. առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ.
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ.
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 250.000 դրամ.
դ. խաղատների կազմակերպման համար՝ 500.000 դրամ.
ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 դրամ.
զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 75.000 դրամ.
10)Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
բ.թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 դրամ.
գ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ.
դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 187.5 դրամ:

11)Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 50.000 դրամ:
12)Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր մեքենայի համար սահմանել` 5.000 դրամ:
13)Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել` 250.000 դրամ:
14) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար` 25.000 դրամ:
15)Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար` մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար սահմանել` 1.000 դրամ:
16)Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել` 5.000 դրամ:
17)Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3.000 դրամ:
18)Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար` մասնակիցներից վճար սահմանել` 2.000 դրամ:
19)Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունր կազմակերպելու համար` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց աղբահանության վճար սահմանել համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 դրամ:
20)Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքագրման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել` 2.000 դրամ:
2. 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել է 0,5 գործակցի կիրառմամբ:
3.Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Ավագանու անդամներ`
1. [illegible]
2. Գաբրիելյան Արմեն
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5.Մկրտչյան Գեորգի
6. Բեգլարյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

27.11.2017թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ havanist.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը նոյեմբերի, 2017թ., N43-Ն

### ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով. ավագանին որոշում է՝

Հաստատել Հայանիստ գյուղական համայնքի մսուր-մանկապարտեզի համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող ծնողական վճարի՝ 2018 թվականի դրույքաչափը՝ 7000 դրամ:

Ավագանու անդամներ՝

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գաբրիելյան Արմեն
3. Գևորգյան Սարգիս
4. Կաաանյան Լևոն
5. Մկրտչյան Գևորգի
6. Բեգլարյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

27.11.2017թ.

գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը նոյեմբերի, 2017թ., N44-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2018Թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2018Թ. ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի և 28-րդ կետի պահանջներով. *ավագանին որոշում է՝*

1.Հաստատել Հայանիստ համայնքի ղեկավարի՝ 2018թ. վարձատրության չափը և Հայանիստի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների՝ 2018թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2.Հաստատել Հայանիստի Մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների՝ 2018թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 2-ի:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գաբրիելյան Արմեն
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5.Մկրաչյան Գևորգի
6. Բեգլարյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

27.11.2017թ.
գ. Հայանիստ

Հավելված՝ 1
Հայանիստի գյուղական համայնքի ավագանու՝
2017 թվականի նոյեմբերի 27-ի
N 44-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՀԱՅԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ 11:

2.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

| Հ / Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1. | Համայնքի ղեկավար | | 272.000 |
| | *ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | |
| 2. | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 198.000 |
| | *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | |
| 3. | Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 198.000 |
| 4. | Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 175.000 |
| 5. | Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 137.000 |
| 6. | Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2/ | 1 | 137.000 |
| 7. | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 124.000 |
| 8. | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/ | 1 | 123.000 |
| | *ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ* | | |
| 9. | Հավաքարար | 1 | 74.100 |
| 10. | Պահակ՝ գիշերային | 1 | 113.500 |
| 11. | Վարորդ | 1 | 80.000 |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված 2
Հայանիստի գյուղական համայնքի ավագանու՝
2017 թվականի նոյեմբերի 27-ի
N 44-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ 11:
2.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

| Հ / Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| | *ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ* | | |
| 1. | Մանկապարանգի տնօրեն | 1 | 142.200 |
| 2. | Մանկապարտեզի դաստիարակ | 1 | 109.200 |
| 3. | Մանկապարտեզի դաստիարակ | 1 | 101.900 |
| 4. | Երաժշտության դաստիարակ | 1(0.5) | 80.500 |
| 5. | Մանկապարտեզի հաշվապահ | 1(0.5) | 85.000 |
| 6. | Մանկապարտեզի դաստիարակի օգնական | 1 | 80.500 |
| 7. | Մանկապարտեզի դաստիարակի օգնական | 1 | 75.100 |
| 8. | Բուժքույր | 1(0.5) | 80.500 |
| 9. | Մանկապարտեզի խոհարար | 1 | 75.100 |
| 10. | Մանկապարտեզի գիշերային պահակ | 1 | 77.300 |
| 11. | Լվացարար | 1 | 75.100 |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.` (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը նոյեմբերի, 2017թ., N45-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից` *ավագանին որոշում է*`

1. Հաստատել 2017թ. վարչական բյուջեի ծախսային մասի փոփոխությունները.
1) 06.3.1 Ջրամատակարարում.
4111 հոդվածին ավելացնել 61.8 հազար դրամ` պոմպակայանի օպերատորի աշխատանքի համար, և պլանը հաստատել 321.8 հազար դրամ:
4241 հոդվածից պակասեցնել 61.8 հազար դրամ, և պլանը հաստատել 838.2 հազար դրամ:
2) 09.2.1 Հանրակրթական ուսուցում.
4639 հոդվածից պակասեցնել 150.0 հազար դրամ, և պլանը հաստատել 350.0 հազար դրամ:
3) 09.1.1 Նախադպրոցական ուսուցում.
4657 հոդվածին ավելացնել 150.0 հազար դրամ` մանկապարտեզի խոհանոցի գույքի գնման համար, և պլանը հաստատել 150.0 հազար դրամ:

Ավագանու անդամներ`
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գաբրիելյան Արմեն
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Մկրտչյան Գևորգ
6. Բեգլարյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

27.11.2017թ.
գ. Հայանիստ